ցութեամբ դիոյն մինչև 'ի Եկեղեցի, կալով մնասցեն մինչ կատարեսցի թաղումն դիոյն, և ընկերակցութիւամբ մնացորդաց ննջեցելոյն յետս դարձցեն 'ի տուն, ամենեքեան գրկեալ համբուրեսցեն մնասցորդս ննջեցելոյն մխիթարական բանիւ, և ելցեն իւրաքանչիւր 'ի տուն իւր, տան ննջեցելոյն 'ի նոյն աւուր մի պատրաստեցի կերակուր վասն այլոց, ոչ քահանայից ոչ աղքատաց, և ոչ հասարակ ժողովրդոց, բայց բնակողաց տանց, և յաւուրն եօթներորդի մնացորդացէ ննջեցելոյն լինիցի հրաւիրումն բարեկամաց և քահանայից իւրեանց 'ի ճաշ, ում և որ քան արանց որ յինքեանք կամեսցեն, և եթէ հրաւիրումս եօթներորդի աւուր թաղման ով ոք ոչ կամի առնել, և կամ զանց արասցէ, նմա ամօթ մի լինիցի, և եթէ ննջեցեալն լինիցի այր ուրեմն հրաւիրեալ ընկերակիցք հարկաւոր է լինիցեն միայն արու, և եթէ ննջեցեալն իցէ կին հրաւիրեալքն կարի լինիլ այրք և կանայք, և հասարակապէս ծախ ննջեցելոց իցէ եթէ թաղման եթէ պաշտօնի եթէ բաժին բարեկամաց այսինքն,

Եպիսկոպոսաց	իւրաքանչիւր	անձանց				
դահեկան	երծաթէ	.	.	.	.	.	4
Վարդապետաց	.	.	.	.	.	1
Քահանայից	.	.	.	.	կէս.	1/2
Սարկաւագաց	.	.	.	.	.	1/4